

## ԳԼՈՒԽ Ե ԱՇԻՒՆԵԱՅ ՕՐԻՈՐԴ

Ոչ ցուրտը, ոչ ճամփուն երկայնութիւնը եւ օրուան կարճութիւնը եւ ոչ վերահաս գիշերուան մութը չէին արգիլեր Գուրգէն իւր ճամփան շարունակելէ. միշտ ձախ թելին վրայ երբեմն հեռուէն եւ քիչ անգամ մօտէն տեսնելով Աղթամարայ ծովակը. եւ կոխուած ձիւնի արահետ ճամփէն անխոտոր երթալով հագիւ թէ երբեմն կը կենար գիւղի մը, աւանի մը քով հարցնելու անուն մը, եւ ձիւնը շուկ առնել տալու համար: Ուստի այսպէս անդադար ձիւնորելով հասաւ Ռշտունեաց Ոստանն, եւ կէս-գիշերուն մօտ էր, երբ ձիւն ցատկէս միջնաբերդին դռանն առջեւ: Եւ սկսաւ երկաթէ դուռը ծեծել անխնայ, որ գերեզմանական լուրթնէն յայտնի էր թէ բացուելու միտք չունէր: Բայց Գուրգէն դիւրաւ յուսահատող մարդկանցմէ չէր. եւ ձմեռ օրով տասնչորս ժամ ճամփայ կտրելով եւ Յուլակը կիսամեռ ընելով, այդ բերդին առաջ ետ չէր կրնար դառնալ, երբ սիրտը կը տրոփէր Յեղինէի յիշատակով: Եւ որքա՛ն բան ունէր նորա ըսելիք: Ուստի այնպիսի դոփիւն, թնդիւն եւ շառաչիւն հանեց, եւ այնչափ դղրդեց բերդին դուռը, որ մօտակայ թնակիչքը, սկսան իրենց դռներէն գլուխնին դուրս երկնցնել՝ կարծելով թէ բազմութիւն մը հասած էր, եւ կը զարմանային տեսնելով լուսնի աղօտ լուսով մարդ մը միայն եւ ձի մը: Այս միջոցին էր, որ վերջապէս դռան քովին նաեւ ձայն մը ելաւ, որ բերդապահին դիտանոցն էր, ուսկից ինք առանց տեսնուելու դուրսի մարդը կը տեսնէր:

— Ա՛յ մարդ, ո՞վ ես, ի՞նչ կ'ուզես, միթէ՛ այս ժամուս հիւրնկալութիւն կը լինի:

— Գուրգէն Արծրունի եմ, բա՛ց, բերդապա՛հ,— կանչեց ձայնը դուրսէն:

— Տէ՛, տղաք, լոյս բերէ՛ք, իշխանին եղբայրն է, շուտ ըրէ՛ք եւ ներսը շարժմունք սկսաւ:

Իսկ Գուրգէն կ'ըսէր. ո՞ւմ յոզն է թէ որ Գուրգէնի համար ներսը կը կոտրաին, բաւ՛ է, որ դռները բացուին: